ՔԱՂՎԱԾՔ

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Երևան, Հանրապետության 39 «30» հունիսի 2025 թ. ժամը 17:00

Ընկերության թվով 267,150 ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր ունեցող թվով 23 բաժնետերերից մասնակցեցին թվով 181,161 բաժնետոմս ունեցող թվով 11 բաժնետեր, որոնց պատկանում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 67,8%-ը: Հետևաբար, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին կետի՝ ժողովն իրավազոր է որոշումներ ընդունելու:

Ժողովի նախագահ՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյան:

Ժողովի քարտուղար՝ Արաքսյա Հարությունյան:

Ելույթ ունեցավ Արամ Կայֆաջյանը. նա ներկայացրեց բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

3. Ընկերության 2024թ. շահույթի բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների չափի հաստատում և վճարման մասին որոշման ընդունում:

Քվեարկության դրված հարցը.

3. Ընկերության 2024թ. շահույթի բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների չափի հաստատում և վճարման մասին որոշման ընդունում:

Քվեարկության արդյունքները.

Կողմ	181,161
Դեմ	0
Ձեռնպահ	0

Քվեարկության արդյունքում ընդունված որոշումը.

3.1 Ուղղել ընկերության կուտակված շահույթից 534,300,000 (հինգ հարյուր երեսունչորս միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ սովորական անվանական բաժնետոմսերի շահութաբաժինների վճարմանը: Յուրաքանչյուր մեկ սովորական անվանական բաժնետոմսի դիմաց վճարել տարեկան շահութաբաժին 2,000 (երկու հազար) ՀՀ դրամի չափով:

3.2 Շահութաբաժինների վճարումները կատարել մինչև 2025թ. օգոստոսի 31-ը:

3.3 Շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը սահմանել 2025թ. հունիսի 5-ը:

3.4 Այն բաժնետերերին ովքեր Ընկերությունում ունեն բրոքերային հաշիվ, շահութաբաժինները վճարել իրենց բրոքերային հաշիվներին փոխանցման միջոցով: Բաժնետերերը հետագայում կարող են տնօրինել շահութաբաժինն ըստ հայեցողության:

Ժողովի նախագահ և
ընկերության գլխավոր տնօրեն՝ ստորագրություն Արամ Կայֆաջյան
Ժողովի քարտուղար՝ ստորագրություն Արաքսյա Հարությունյան

Տարեկան ժողովի արձանագրությունը կազմված է 30.06.2025 թ.-ին, սույն քաղվածքը՝ 16.03.2026 թ.-ին, քաղվածքը բաղկացած է 1 (մեկ) էջից:

Հավաստում եմ սույն քաղվածքի
համապատասխանությունը բնօրինակին.
«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն՝ _____ Արամ Կայֆաջյան